ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Մարմնի անվանումը **ՀՀ ՆԳՆ**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **ՀՀ վարչապետի 15.05.2025թ. Թիվ 412-Ա որոշում**
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
   ՀՀ ՆԳ նախարար Արփինե Սարգսյան
4. Գործուղման վայրը **Բելգիայի Թագավորություն ք. Բրյուսել**
5. Գործուղման ժամկետը 10.05.2025թ-12.05.2025թ.
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
   1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսեր
   (ճանապարհածախս,օրապահիկ, գիշերավարձ,)
   2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցվող տարբերակը)

	ա.	փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
	բ.	գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն (**հաշվարկը կատարված է ԿԲ 22.05.2025թ-ի կուրսով՝ 1€=434.11դր.**)

Ծախսի տեսակը		Արփինե Սարգսյան	Ընդամենը դրամ
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	բիզնես դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	634963	634963
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	206 €	
	Վճարը 1 օրվա համար (դրամ).	89426.66	
	Օրերի քանակը	2	
	ընդամենը (դրամ)	178853.32	178853.32
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	126 €	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	54697.86	
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	164093.58	164093.58
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (ապահովագրություն)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		977910	977910

ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար **Ա. Ֆիդանյան**

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԳ նախարարի՝ 2025 թվականի հունիսի 10-12-ը Բրյուսել այցի վերաբերյալ

1.	Անունը, ազգանունը.	Արփինե Սարգսյան
2.	Զբաղեցրած պաշտոնը.	ՀՀ ներքին գործերի նախարար
3.	Գործուղման վայրը և ժամկետները	Հունիսի 10-ից 12-ը, Բելգիայի Թագավորության Բրյուսել քաղաք
4.	Հրավիրող կողմը.	Աշխատանքային այց
5.	Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).	Եվրոպական միության հետ վիզաների ազատականացման երկխոսության գործընթացը քննարկելու նպատակով:
6.	Քննարկված թեմաները	ՀՀ-ԵՄ վիզաների ազատականացման գործընթացին առնչվող հարցեր, ԵՄ երկրների հետ ռեադմիսիոն համաձայնագրերի իրականացման ընթացք, աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ իրականացվող աշխատանքներ:
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.	- Հունիսի 10-ին հանդիպում է տեղի ունեցել ԵՄ ներքին գործերի և միգրացիայի հարցերով հանձնակատար Մագնուս Բրյունների հետ: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել ԵՄ-Հայաստան վիզաների ազատականացման երկխոսության գործընթացին՝ շեշտադրելով գործնական քայլերի կարևորությունը: Հանձնակատար Բրյունները հայտնեց, որ հունիսի 24-ին Հայաստան կայցելի եվրոպական փորձագիտական պատվիրակությունը՝ քննարկելու ԵՄ-Հայաստան վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի նախագծային տարբերակը: Եվրոպական կողմը վերահաստատել է իր պատրաստակամությունը հնարավորինս սեղմ ժամկետներում ամփոփել և մեզ ներկայացնել Գործողությունների ծրագիրը: Մագնուս Բրյունները

		պատրաստակամություն է հայտնել՝ աջակցելու վիզաների ազատականացման գործընթացը արագացնելու հարցում։ Գործողությունների ծրագրի արագ կենսագործման ուղղությամբ հետագա քայլերը առավել սերտ համակարգելու և երկրում իրականացվող լայնածավալ փոփոխություններին ծանոթանալու նպատակով հանձնակատար Բրյուներին հրավիրվել է հաջորդ տարի այցելելու Երևան, վերջինս ընդունել է հրավերը։ - Հունիսի 10-ին հանդիպում է տեղի ունեցել նաև Ընդլայնման հարցերով Եվրոպայի հանձնակատար Մարտա Կոսի հետ։ Վերջինս բարձր գնահատեց ձևավորված երկկողմ սերտ հարաբերությունները և ընդգծեց Հայաստանի՝ հուսալի գործընկեր լինելու փաստը։ Մարտա Կոսը հետաքրքրվեց ՆԳ նախարարությունում ընթացող բարեփոխումներով՝ հայտնելով աջակցություն ցուցաբերելու պատրաստակամություն։ Հանձնակատար Կոսը դրական է գնահատել ռեադմիսիոն համաձայնագրերի իրականացման ընթացքը։ Քննարկվել են նաև աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, այդ թվում՝ Փրկարար ծառայության արդիականացմանը վերաբերող հարցեր։ Անդրադարձ կատարվեց ճգնաժամային կառավարման ոլորտում Հայաստանի կողմից վերջերս ընդունված նոր ռազմավարությանը։ Մտքեր փոխանակվեցին ներկայումս բանակցվող կարճաժամկետ և

		միջնաժամկետ ծրագրերի ընթացքի մասին, որոնց ընդհանուր բյուջեն կազմում է շուրջ 7 միլիոն եվրո։ - Հավասարության, պատրաստվածության և ճգնաժամային կառավարման հարցերով ԵՄ հանձնակատար տիկին Հաջա Լահբիբի հետ կայացած հանդիպման ընթացքում քննարկվել է քաղաքացիական պաշտպանության և ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության կարողությունների զարգացման հարցերը։ Ի պատասխան մեր խնդրանքի՝ աջակցելու ԵՄ քաղաքացիական պաշտպանության մեխանիզմին (UCPM) Հայաստանի Հանրապետության միանալու գործընթացին, տիկին Լահբիբի կողմից առաջարկություն է արվել մինչ այդ կնքել համագործակցության վերաբերյալ վարչական համաձայնագիր։ - Այցի շրջանակներում հանդիպումներ տեղի ունեցան նաև Բելգիայի Թագավորության անվտանգության և ներքին գործերի նախարար Բեռնար Կանտանի և Բելգիայի Թագավորության Ապաստանի, միգրացիայի և սոցիալական ինտեգրման, խոշոր քաղաքային քաղաքականության նախարար Աննելին Վան Բոսսյուի հետ, որոնց շրջանակներում վերջիններս ևս իրենց պատրաստակամությունը հայտնեցին աջակցելու ԵՄ վիզաների ազատականացման գործընթացին։ Այցի ողջ ընթացքում պատվիրակությանը ուղեկցում էր ԵՄ-ում ՀՀ դեսպան պարոն Տիգրան Բալայանը։

8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները , ստորագրված փաստաթղթերը.	Հավասարության, պատրաստվածության և ճգնաժամային կառավարման հարցերով ԵՄ հանձնակատար տիկին Լահբիբի կողմից առաջարկություն է արվել կնքել համագործակցության վերաբերյալ վարչական համաձայնագիր։
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.	Կողմերը վերահաստատել են իրենց պատրաստակամությունը զարգացնելու գործընկերությունը համատեղ ծրագրերի մշակման և կարողությունների զարգացման ուղղություններով։

ՀՀ ՆԳՆ